ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2001 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 5 նոյեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Հ. Մխիթարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված՝ «Վտանգավոր արտադրական օբյեկտներում արդյունաբերական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» 2001 թվականի սեպտեմբերի 28-ի համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանա-

գրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 04.10.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա արձանագրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Վտանգավոր արտադրական օբյեկտներում արդյունաբերական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» 2001թ. սեպտեմբերի 28-ի համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրությունը /այսուհետ՝ Արձանագրություն/ ստորագրվել է Սանկտ Պետերբուրգում՝ 2011թ. հոկտեմբերի 18-ին:

Վտանգավոր արտադրական օբյեկտներում արդյունաբերական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ ստորագրվել է 2001թ. սեպտեմբերի 28-ին՝ Մոսկվայում եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2003թ. դեկտեմբերի 1-ի թիվ Ն-058-3 որոշմամբ /ՀՀ սահմանադրական դատարանի 22.04.2003թ. թիվ ՍԴՈ-414 որոշում/:

Հիշատակված Համաձայնագիրը կոչված է վտանգավոր արտադրական օբյեկտներում արդյունաբերական անվտանգության ապահովման ոլորտում Կողմերի միջեւ փոխադարձ համաձայնեցված քաղաքականության իրականացմանը, այդ բնագավառում ընդհանուր մոտեցումների, իրավական կարգավորման սկզբունքների համատեղ մշակմանը, դրանց՝ միջազգային նորմերին ու չափանիշներին ներդաշնակեցմանը, ինչպես նաեւ առեւտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանն ուղղված պետական հսկողության սահմանմանը:

2. Խնդրո առարկա Արձանագրությամբ փոփոխություններ եւ լրացումներ են կատարվում վերոհիշյալ Համաձայնագրում, մասնավորապես, դրա անքակտելի մասը համարվող Արդյունաբերական անվտանգության միջպետական խորհրդի մասին կարգում:

Միջպետական խորհրդի կազմավորումը նախատեսված է Համաձայնագրի 4-րդ հոդվածում: Սահմանված է, որ ստեղծվում է արդյունաբերական անվտանգության խորհուրդ /այսուհետ՝ Խորհուրդ/, որի գործունեության կարգը, կազմը, գործառույթները, գործունեության հիմնական ուղղությունները, իրավասությունը ամրագրվում են Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելվածում:

Համաձայն քննության ենթակա Արձանագրության նախաբանի՝ վերջինիս նպատակն է կատարելագործել միջպետական խորհրդի գործունեությունն արդյունաբերական անվտանգության բնագավառում եւ բարձրացնել դրա դերակատարությունն այդ ոլորտում Կողմերի համագործակցությունը համաձայնեցնելիս:

Ըստ Արձանագրության՝ փոփոխություններ են կատարվում հիշատակված Կարգի առաջին բաժնի 1-5-րդ կետերում, չորրորդ բաժինը շարադրվում է նոր խմբագրությամբ, բացի դրանից, Կարգը լրացվում է «Խորհրդի քարտուղարությունը» եւ «Ֆինանսավորումը» վերտառությամբ 5-րդ եւ 6-րդ նոր բաժիններով /Արձանագրության 1-ին հոդված/:

Նախատեսվում է, որ այսուհետ Խորհուրդը հանդիսանալու է ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմին, որը կոչված է իր իրավասության շրջանակներում սահմանված կարգով կազմակերպելու եւ համաձայնեցնելու՝ ԱՊՀ մասնակից պետությունների եւ կառավարությունների ղեկավարների, արտաքին գործերի նախարարների ու տնտեսական խորհուրդների կողմից ընդունված որոշումների կատարումը:

Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներով ու նորմերով, ԱՊՀ Կանոնադրությամբ, միջազգային պայմանագրերով, Համաձայնագրով եւ Կարգով, ինչպես նաեւ ԱՊՀ շրջանակներում ընդունված այլ իրավական ակտերով: Խորհուրդն իր գործունեության համար հաշվետու է ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների Խորհրդին, իսկ իր գործունեության մասին ամենամյա տեղեկատվություն է ներկայացնելու ԱՊՀ Գործադիր կոմիտեին:

Խորհրդի անդամներ են հանդիսանում Համաձայնագրի մասնակից պետությունների պետական հսկողության մարմինների ղեկավարները կամ արդյունաբերական անվտանգության ոլորտում պետական քաղաքականություն իրականացնող պետական մարմինների ղեկավարները: Խորհրդակցական ձայնի իրավունքով Խորհրդի կազմի մեջ են մտնում Խորհրդի քարտուղարը ու ԱՊՀ Գործադիր կոմիտեի ներկայացուցիչը:

Սահմանված է, որ Խորհրդի աշխատանքներն իրականացվում են Խորհրդի նիստերի անցկացման ճանապարհով, որպես կանոն, Համաձայնագրի մասնակից պետություններում՝ հերթականությամբ:

Կարգի 4-րդ բաժնի 11-րդ կետով անդրադարձ է կատարվում Խորհրդի նախագահի հիմնական գործառույթներին:

Կարգի նույն բաժնի 14-րդ կետը կարգավորում է Խորհրդի նիստերի օրակարգի ձեւավորման վերաբերյալ հարցերը:

Սահմանված է, որ Խորհրդի որոշումները, բացառությամբ ընթացակարգային հարցերի, ընդունվում են Կողմերի փոխհամաձայնությամբ:

Կարգի նոր՝ 5-րդ բաժինն ամրագրում է Խորհրդի Քարտուղարության իրավական կարգավիճակը, նախատեսելով, որ այն իրականացնում է Խորհրդի կազմակերպական–տեխնիկական եւ տեղեկատվական գործունեությունը, սպառիչ թվարկելով Քարտուղարության հիմնական գործառույթները:

Խորհրդի քարտուղարը նշանակվում է Խորհրդի նախագահի կողմից, իսկ քարտուղարի տեղակալ է հանդիսանում ԱՊՀ Գործադիր կոմիտեի ներկայացուցիչը:

Խորհրդի քարտուղարության կանոնադրությունը հաստատվում է Խորհրդի կողմից:

Կարգի «Ֆինանսավորումը» խորագրով նոր՝ 6-րդ բաժինը նվիրված է Խորհրդի նիստերի անցկացման հետ կապված ֆինանսական բնույթի հարցերին:

Համաձայն Արձանագրության 2-րդ հոդվածի՝ այն ուժի մեջ է մտնում ստորագրած Կողմերի կողմից ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին ծանուցումն ավանդապահի ստանալուց 30 օր հետո:

3. Համապատասխան Արձանագրության եւ ի հավելումն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

-Խորհրդի արտահերթ նիստ նախաձեռնելու իրավունքն իրացնելու դեպքում՝ կազմակերպել եւ ապահովել նիստի անցկացումը /Կարգի 4-րդ բաժին, կետ 9, մաս 2/,

-որպես Ընդունող կողմ՝ ապահովել, որպեսզի Խորհրդի նիստերի անցկացման հետ կապված ֆինանսական ծախսերն իրականացվեն ՀՀ իշխանության համապատասխան մարմնի հաշվին /Կարգի 6-րդ բաժին, կետ 20/,

-որպես Ուղարկող կողմ՝ ապահովել, որպեսզի Խորհրդի անդամների եւ փորձագետների՝ նիստերի մասնակցության ծախսերն ինքնուրույն կրեն ուղարկող ՀՀ իշխանության մարմինը եւ կազմակերպությունները /Կարգի 6-րդ բաժին, կետ 21/:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննության առարկա Արձանագրությունը հանդիսանում է Համաձայնագրի անքակտելի մասը, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն միտված է ՀՀ Սահմանադրությամբ /32 եւ 33.2. հոդվածներ/ նախատեսված՝ անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների, ինչպես նաեւ իր առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու յուրաքանչյուրի իրավունքների իրացմանն ու երաշխավորմանը, բնապահպանական եւ արդյունաբերական անվտանգության խնդիրների արդյունավետ լուծման նպատակով միջպետական համագործակցության հետագա զարգացմանը եւ խորացմանը, ուստի դրա դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված՝ «Վտանգավոր արտադրական օբյեկտներում արդյունաբերական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» 2001 թվականի սեպտեմբերի 28-ի համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

5 նոյեմբերի 2013 թվականի
ՍԴՈ-1122